ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 16 » ապրիլ 2026թ. No 2131 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 170-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 03/1971-26 առ 13.04.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դույեի համապատասխանեցման (միայն Հայաստանում կիրառման համար) ընթացակարգով գրանցել երաշխավորված 4 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1)Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-

ի 32-րդ և ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 180-րդ կետի պահանջների:

2)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված Ռիսեբոն N 21249, Բիցիլին-3 N 20222 և Լեվիցիտամ N 22104, N 22105 դեղերի գրանցման հավաստագրերը համաձայն եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Invalid signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի ապրիլ « 16 » - ի N 2131- Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության գրանցման և փորձաքննության կանոններին դույեի համապատասխանեցման (միայն Հայաստանում կիրառման համար) ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ռիսեբոն | ռիսեդրոնաթթու (ռիսեդրոնատ նատրիում) | դեղահատեր թաղանթապատ | 35մգ; (4/1x4/) բլիստերում | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 5 Մարշալկա Ջոզեֆա Պիլսուդսկիեգո փ., 95-200 Պաբիանիցե` որակի և բաց թողնման հսկող, Ադամեդ Ֆարմա Ս.Ա., 33, Սզկոլնա փ., 95-054 Կսավերով, Լեհաստան- բալք արտադրող, փաթեթավորող | Լեհաստան | Ադամեդ Ֆարմա Ս.Ա., Պիենկով, 6Ա, Մ. Ադամկևիչա փ., 05-152 Չոսնով | Լեհաստան | Դ | 23994 (026820) 10.04.2026 |
| 2 | Բիցիլին-3 | բենզաթին բենզիլպենիցիլին, բենզիլպենիցիլին նատրիում, բենզիլպենիցիլին պրոկային | դեղափոշի ներարկման դեղակախույթի | 200000ՄՄ+200000ՄՄ+200000ՄՄ; (40) ապակե սրվակներ | Կիևմեդպրեպարատ ՀԲԸ, 01032, Կիև, Սակսագանսկոգո փ., 139 | Ուկրաինա | Կիևմեդպրեպարատ ՀԲԸ, 01032, Կիև, Սակսագանսկոգո փ., 139 | Ուկրաինա | Դ | 23995 (026304) 10.04.2026 |
| 3 | Լևկիցիտամ | լևետիրացետամ | դեղահատեր թաղանթապատ | 250մգ; (30/3x10/) բլիստերում, (60/6x10/) բլիստերում | Ֆարմա Ստարտ ՍՊԸ, Բուլվար Վատսլավա Հավելա, 8, 03124, Կիև | Ուկրաինա | Ացինո Ուկրաինա ՍՊԸ, Բուլվար Վատսլավա Հավելա, 8, 03124, Կիև | Ուկրաինա | Դ | 23996 (025616) 10.04.2026 |
| 4 | Լևկիցիտամ | լևետիրացետամ | դեղահատեր թաղանթապատ | 500մգ; (30/3x10/) բլիստերում, (60/6x10/) բլիստերում | Ֆարմա Ստարտ ՍՊԸ, Բուլվար Վատսլավա Հավելա, 8, 03124, Կիև | Ուկրաինա | Ացինո Ուկրաինա ՍՊԸ, Բուլվար Վատսլավա Հավելա, 8, 03124, Կիև | Ուկրաինա | Դ | 23997 (025616) 10.04.2026 |